ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Անի համայնք

N 489
11 մայիսի 2022թ.

«ՆՈՎՈՍՏՐՈՅ»ՍՊԸ

ՏՆՕՐԵՆ՝ Խ. ՎԱՐԱԺՅԱՆ

Հարգելի պարոն Վարաժյան

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի և «Նովոստրոյ» ՍՊԸ ընկերության միջև «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն 18.01.2022թ. կնքվել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սահմանամերձ Աղին բնակավայրում Սարակապ և Աղին բնակավայրերի խմելու ջրի համար խորքային հորի հորատում և պոմպի տեղադրման աշխատանքների «ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-22/01» ծածկագրով պայմանագիր:

Սույն ծրագիրը ընդգրկվել և հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից 2022թ. սուբվենցիոն ծրագրերում և ներկայացված դիտողությունների շտկման արդյունքում նախագծանախահաշվային փաստաթղթերում էական փոփոխություններ են կատարվել, որի արդյունքում փոփոխվել է նախահաշվային գինը, որը բերել է գնման ընթացակարգի փոփոխության:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 467 հոդվածի 1-ին կետը և պայմանագրի 8.15 կետը Անի համայնքապետարանը միակողմանի լուծում է պայմանագիրը:

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կատ.Կ. Նալբանդյան
հեռ 098-48-03-29